2021

ՀՖԿՍՊԻ–ՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Որակի ապահովման բաժին

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ 2

1. «ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ 3

ԱՄՓՈՓՈՒՄ 12

2. «ԿԻՆԵԶԻՈԼՈԳԻԱ» ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԱՍՆԱԳԻ-ՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ 14

ԱՄՓՈՓՈՒՄ 21

3. «ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ և ՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԱՐԶՈՒՄՆԵՐ» ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ 23

ԱՄՓՈՓՈՒՄ 35

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 37

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՀԱՐՑՄԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹԵՐԸ 39

ՀԱՐՑՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Համաձայն «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետ՝ ՀՖԿՍՊԻ) Գիտական խորհրդի 2021թ. փետրվարի 1–ի նիստում հաստատված կանոնակարգի՝ ՀՖԿՍՊԻ Որակի ապահովան բաժինը (ՈԱԲ) անց է կացրել ինստիտուտի կողմից կազմակերպված մասնագիտական/մանկավարժական պրակտիկայի գնահատում: Վերջինս պրակտիկայի գործընթացի բարելավման կարևոր բաղադրիչ է և անցկացվում է ՀՖԿՍՊԻ-ի կանոնադրության, «ՀՖԿՍՊԻ որակի ներքին ապահովման քաղաքականության», «Մասնագիտության կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման և վերանայման ընթացակարգի», «Ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության քաղաքականության» հիման վրա:

Հարցումը նպատակ ունի ուսումնասիրելու և գնահատելու պրակտիկայից ուսանողների բավարարվածության աստիճանը և բարձրացնելու պրակտիկայի արդյունավետությունը:

Հարցման խնդիրներն են՝

1) Ուսանողների տրված գնահատականների հիման վրա պարզել պրակտիկայի կազմակերպման, տևողության, վայրի, պայմանների, պրակտիկայի մեթոդիստի/ղեկավարի կատարած աշխատանքների արդյունավետութունը:
2) Պարզել՝ ուսումնառության ընթացքում ուսանողների յուրացրած մասնագիտական գիտելիքներն ու կարողությունները որքանով են օգնել պրակտիկայի ընթացքում:
3) Բացահայտել այն խնդիրները, որոնք խոչընդոտում են պրակտիկայի արդյունավետ անցկացմանը:

Հարցումն անցկացվել է ՀՖԿՍՊԻ բակալավրիատի 4–րդ կուրսի ուսանողների շրջանում (2021թ., փետրվար): Որակի ապահովան բաժնի սոցիոլոգի կողմից մշակվել են «Լրագրություն», «Կինեզիոլոգիա», «Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ» կրթական ծրագրերով նախատեսված մասնագիտական մանկավարժական/կլինիկական պրակտիկայի գնահատման հարցաթերթերը: Հարցումն անցկացվել է Որակի ապահովման բաժնի կողմից՝ անանուն, թղթային տարբերակով:

Ստորև աղյուսակում նշված են պրակտիկային և սույն հարցմանը մասնակցած ուսանողների թվաքանակները:

Աղյուսակ 1. Պրակտիկային և հարցմանը մասնակցած ուսանողների թվաքանակները

Մասնագիտություն	Պրակտիկայի մասնակիցների քանակը	Հարցման մասնակիցների քանակը	Հարցման մասնակիցների տոկոսը
Լրագրություն	10	9	90%
Կինեզիոլոգիա	34	28	82%
Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ	236	134	57%

ԸՆԴԱՄԵՆԸ	**280**	**171**	**61%**

Հարցման մասնակիցները ընտրվել են պատահականության սկզբունքով: Պրակտիկայի հարցմանը մասնակցել է 280 պրակտիկանտներից 171-ը (61%) և այս ընտրանքային համախմբությունը մեզ հնարավորություն է տալիս 95% վստահության մակարդակի և 5% վստահության միջակայքի սահմաններում ընդհանրացումներ և եզրահանգումներ կատարելու պրակտիկայի բոլոր մասնակիցների վերաբերյալ:

1. «ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ինչպես նշվեց նախորդ բաժնում, «Լրագրություն» կրթական ծրագրով նախատեսված մասնագիտական պրակտիկա է անցել «Լրագրություն» մասնագիտությամբ 10 ուսանող, որոնցից 9-ը լրացրել են գնահատման հարցաթերթեր:

1.1 Պրակտիկայի անցկացման վայրերը

«Մարզական լրագրություն» մասնագիտությամբ ուսանողները պրակտիկան անցել են հեռուստաընկերություններում և առցանց լրատվամիջոցներում Տես՝ Աղյուսակ 2:

Աղյուսակ 2. Պրակտիկայի անցկացման վայրերը

Պրակտիկայի անցկացման վայրերը	ՀՖԿՍՊԻ պրակտիկանտների քանակը
«Զանգեզուր» հեռուստաընկերություն	1
Armenia TV հեռուստաընկերություն	2
Armsport կայք	2
NEWS.am	1
Երկիր մեդիա	1
Սպորտնյուզ	1

Մեկ պրակտիկանտ չի նշել պրակտիկայի վայրը:

1.2. Պրակտիկայի սկզբում Ձեզ տրամադրվե՞լ է պրակտիկայի ծրագիրը և տեղեկատվություններ պրակտիկայի անցկացման գործընթացի վերաբերյալ:

Գծապատկեր 1.



1.3. Պրակտիկան կազմակերպված էր պրակտիկայի ծրագրին համապատասխան:

Գծապատկեր 2.



1.4. Պրակտիկայի նպատակը հասկանալի և մատչելի էր Ձեզ համար:

Գծապատկեր 3.



1.5. Պրակտիկան արդյունավետ էր գիտելիքի և գործնական կարողությունների մակարդակի բարձրացման համար:

Գծապատկեր 4.



1.6. Տեսական և գործնական առաջադրանքները պարզ էին և հասկանալի:

Գծապատկեր 5.



1.7. Ուսումնառության ընթացքում Ձեր յուրացրած տեսական գիտելիքները և գործնական կարողությունները բավարա՞ր էին պրակտիկ գործունեություն իրականացնելու համար:

Գծապատկեր 6.



1.8 Պրակտիկայի ընթացքում ձեռք բերած կարողությունները և փորձը կարող եք կիրառել Ձեր աշխատանքային գործունեության ընթացքում:

Գծապատկեր 7.



1.9 Պրակտիկան օգնե՞ց Ձեզ զարգացնել տեսական և գործնական գործունեության միասնականությունը:

Գծապատկեր 8.



1.10.Պրակտիկայի ընթացքը նպաստե՞ց փիրապետելու այն տեխնոլոգիաներին և մասնագիտական նոր հմտություններին, որոնք անհրաժեշտ են լրագրողական աշխատանքում:

Գծապատկեր 9.



1.11 Պրակտիկայի ընթացքում ծանոթացե՞լ եք զանգվածային լրատվամիջոցների ստեղծագործական գործունեությանը, դրա բովանդակությանն ու կառուցվածքին:

Գծապատկեր 10.



1.12 Ձեզ բավարարե՞ց ընդունող լրատվամիջոցի աջակցությունը պրակտիկայի ընթացքում:

Գծապատկեր 11.



1.13 Ընդունող կազմակերպությունը ինչպե՞ս է աջակցել պրակտիկայի ընթացքում:

Ստացվել են հետևյալ պատասխանները.

- ✓ (Armenia TV) Լրատվամիջոցի աջակցությունը շատ մեծ էր. մեզ տրամադրում էին աուդիովիդեո տեխնիկա: Լրատվամիջոցը ապահովում էր մեզ ամեն ինչով, ինչը հնարավոր էր պրակտիկան լիարժեք անցկացնելու համար:
- ✓ (Armenia TV) Տրամադրում էին օգտակար խորհուրդներ մասնագիտական հարցերի վերաբերյալ:
- ✓ (Armsport կայք) Հանձնարարվում էր լրագրողական աշխատանք տարբեր թեմաներով:
- ✓ (Armsport կայք) Տեղում աջակցել է:
- ✓ Թերի է աջակցել:

Չորս պրակտիկանտ չի պատասխանել այս հարցին:

1.14 Ինչպե՞ս կգնահատեք փվյալ լրատվամիջոցում Ձեզ հետ աշխատող մասնագետի աշխատանքը:

Գծապատկեր 12.



1.15 Ի՞նչ դիտարկումներ և առաջարկություններ ունեք լրատվամիջոց-պրակտիկանտ աշխատաքային համագործակցության բարելավման համար:

- ✓ Կցանկանայի նման աշխատանքներ ավելի շատ լինեին:

- ✓ Շատ ուրախալի փաստ է, որ մարզում հնարավորություն ունեցա անցկացնել պրակտիկան:
- ✓ Ցանկալի է, որ պրակտիկան իրականացվի բուհում և կրի շարունակական բնույթ, և այն պարտադիր լինի հենց 1-ին կուրսից:
- ✓ Պետք է պրակտիկային ավելի շատ ժամանակ տրամադրել:
- ✓ Ցանկալի է հենց 1-ին կուրսից մեթոդիստի հետ մշակել հետագա գործունեության պլանը:

Չորս պրակտիկանտ չի պատասխանել այս հարցին:

1.16 Ինչպե՞ս կգնահատեք պրակտիկան ղեկավարող մեթոդիստի (դասախոսի) աշխատանքը:

Գծապատկեր 13.



1.17 Պրակտիկայի տևողությունը բավարա՞ր էր դրված նպատակներին հասնելու համար:

Գծապատկեր 14.



1.18. Մասնագիտական ո՞ր կարողությունները կարողացաք զարգացնել, որոնց չէիք փիրապետում մինչ պրակտիկա անցնելը:

Գծապատկեր 15.



Մեկ պրակտիկանտ չի պատասխանել այս հարցին:

Պատասխանների հանրագումարը անցնում է 100%-ից, քանի որ նշվել են մեկից ավելի պատասխաններ:

1.19. Պրակտիկայի ավարտին ի՞նչ կարողություններ ձեռք բերեցիք:

Գծապատկեր 16.



1.20 Ի՞նչ ակնկալիքներ ունեիք Ձեր պրակտիկայից:
1.21. Ձեր ակնկալիքները արդարացվեցի՞ն:
Աղյուսակ 3.

1.20. Ի՞նչ ակնկալիքներ ունեիք Ձեր պրակտիկայից:	1.21. Ձեր ակնկալիքները արդարաց-վեցի՞ն:	2.Որտե՞ղ է անցկացվել Ձեր պրակտիկան:
Աշխատել ստուդիայում, ձայնագրվել և ներկա լինել ռեպորտաժի պատրաստմանը:	այո	Armenia TV
Ձեռք բերել բավարար գիտելիքներ հետագայում ուժերս փորձելու համար այս ոլորտում:	մասամբ	Armsport կայք
Ստանալ լիարժեք գործնական հմտություններ:	այո	Սպորտնյուզ
Ստանալ պրակտիկ հմտություններ, կարողություններ, կադրում աշխատել:	այո	«Զանգեզուր» TV
Ստանալ օգտական տեղեկություններ մասնագիտությանս վերաբերյալ:	այո	Armsport կայք
Տիրապետել ֆուտբոլային հանդիպումները մեկնաբանելու հմտություններին:	մասամբ	Armenia TV
Փորձի փոխանակում, աշխատելու և համագործակցելու հնարավորություն:	ոչ	Պատ. չկա
Պատ. չկա	այո	Երկիր մեդիա
Պատ. չկա	մասամբ	NEWS.am

1.22 Նշեք Ձեր պրակտիկայի առավելությունները:
1.23 Նշեք Ձեր պրակտիկայի թերությունները:
Աղյուսակ 4.

1.22 Նշեք Ձեր պրակտիկայի առավելությունները:	1.23 Նշեք Ձեր պրակտիկայի թերությունները:	2.Որտե՞ղ է անցկացվել Ձեր պրակտիկան:
Ժամանակակից տաղավարներ, տեխնիկական միջոցների հագեցվածություն:	Պրակտիկայի տևողությունը կարճ էր:	Armenia TV
Ուսումնասիրեցինք մասնագիտական հմտությունները:	Պրակտիկան իրականացնում են բարձր կուրսում:	Armsport կայք
Մարզում պրակտիկայի անցկացումը, լիարժեք գիտելիքներ ստանալը:	Պրակտիկայի տևողությունը կարճ էր:	«Զանգեզուր» TV
Պրակտիկ դասընթացներ, փորձի փոխանակում, սխալների վերանայում:	Պրակտիկայի տևողությունը կարճ էր:	Armsport կայք

Գործնական աշխատանքները, հարցազրույցների անցկացումը	Պրակտիկայի տևողությունը կարճ էր:	Armenia TV
Պատ. չկա	Քաղաքականացված թեմաներ	Պատ. չկա

1.24 Խնդրում ենք արտահայտեք պրակտիկայի արդյունավետության բարելավման առաջարկություններ:

- ✓ Ավելի լավ արդյունք ունենալու համար անհրաժեշտ է ավելի երկար անցկացնել պրակտիկան:
- ✓ Ժամանակը լինի շատ, ուսումը՝ ավելի խորացված:
- ✓ Պրակտիկայի անցկացումը կարելի է ավելի երկարաժամկետ դարձնել:
- ✓ Պրակտիկան լիներ ավելի երկարատև:
- ✓ Պրակտիկան հնարավորություն տվեց գործնականում մանրամասն ծանոթանալու մասնագիտությանը, մասնակցել նկարահանումների: Հնարավորություն ստացանք ձայնագրվել և նկարահանվել:

Չորս պրակտիկանտ չի պատասխանել այս հարցին:

ԱՄՓՈՓՈՒՄ

«Լրագրություն» կրթական ծրագրով նախատեսված մասնագիտական պրակտիկա է անցել 10 ուսանող, որոնցից 9-ը լրացրել են գնահատման հարցաթերթեր: 2 ուսանող պրակտիկան անցել է «Արմենիա թիվի» հեռուստաընկերությունում, 2-ը՝ «Արմսպորտ» առցանց լրատվականում, և մեկական ուսանողներ «Զանգեզուր» հեռուստաընկերությունում, «News.am», «Երկիր Մեդիա» և «Սպորտնյուզ» լրատվական ընկերություններում (մեկ պրակտիկանտ չի նշել պրակտիկայի անցկացման վայրը):

Ըստ հարցման արդյունքների՝

- Պրակտիկանտների 67%-ին պրակտիկայի սկզբում տրամադրվել է պրակտիկայի ծրագիրը և տեղեկատվություններ պրակտիկայի անցկացման գործընթացի վերաբերյալ (33%-ին մասամբ է տրամադրվել):
- Հարցվածների 78%-ի կարծիքով, պրակտիկան կազմակերպված էր պրակտիկայի ծրագրին համապատասխան:
- Պրակտիկայի նպատակը հասկանալի և մատչելի էր 89%-ի համար:
- Բոլոր հարցված լրագրող պրակտիկանտները (9 հոգի կամ 100%) համարում են, որ պրակտիկան արդյունավետ էր գիտելիքի և գործնական կարողությունների մակարդակի բարձրացման առումով:
- Հարցվածների 77%-ը համարում են, որ տեսական և գործնական առաջադրանքները պարզ էին և հասկանալի:
- Ինչ վերաբերում է այն հարցին, թե արդյո՞ք ուսումնառության ընթացքում իրենց յուրացրած տեսական գիտելիքներն ու գործնական կարողությունները բավարար էին պրակտիկ գործունեություն իրականացնելու համար, միայն 33%-ն է պատասխանել՝ «այո»: 66%-ի համար դրանք «մասամբ» էին բավարար:
- Հարցված լրագրողների 89%-ը համաձայն է այն մտքի հետ, որ պրակտիկայի ընթացքում ձեռք բերած կարողությունները և փորձը կարող են կիրառել իրենց աշխատանքային գործունեության ընթացքում:
- 67%-ին պրակտիկան օգնել է՝ զարգացնելու տեսական և գործնական գործունեության միասնականությունը:
- Հարցվածների 56%-ին պրակտիկայի ընթացքը նպաստել է, որպեսզի տիրապետեն այն տեխնոլոգիաներին և մասնագիտական նոր հմտություններին, որոնք անհրաժեշտ են լրագրողական աշխատանքում: 44%-ին «մասամբ» է օգնել:
- Պրակտիկայի ընթացքում զանգվածային լրատվամիջոցների ստեղծագործական գործունեությանը, դրա բովանդակությանն ու կառուցվածքին ծանոթացել են հարցվածների 67%-ը: 33%-ը մասամբ են ծանոթացել դրանց:
- Ընդունող լրատվամիջոցի աջակցությունը պրակտիկայի ընթացքում բավարարել է հարցվածների 44%-ին: Մյուս 44%-ին որոշ չափով է բավարարել, իսկ 11%-ին չի բավարարել: «Արմենիա թիվի» հեռուստաընկերությունում պրակտիկա անցած երկու ուսանողն ստացել են մեծ աջակցություն ընդունող կազմակերպության կողմից: «Արմսպորտ» լրատվականում նույնպես բավարար աջակցություն են ստացել

պրակտիկանտները, իսկ մյուս ընդունող կազմակերպությունների աջակցությունը կամ թերի է եղել, կամ այդ մասին կարծիք չեն հայտնել հարցվածները:

- Լրատվամիջոցներում իրենց հետ աշխատող մասնագետների աշխատանքը «գերազանց» են գնահատել հարցվածների 44%-ը, «լավ»՝ 22%-ը, «բավարար»՝ ևս 22%-ը և «չեզոք»՝ 11%-ը:
- Պրակտիկան ղեկավարող մեթոդիստի (դասախոսի) աշխատանքը «գերազանց» են գնահատել հարցվածների 56%-ը, «լավ»՝ 11%-ը և «բավարար»՝ 33%-ը:
- Ինչ վերաբերում է պրակտիկայի տևողությանը, հարցվածների 78%-ը համարում է, որ այն բավարար էր՝ դրված նպատակներին հասնելու համար:
- Հարցված լրագրող պրակտիկանտների 56%-ը կարողացել են պրակտիկայի շնորհիվ զարգացնել տարբեր ժանրերի լրագրողական նյութեր գրելու, 33%-ը՝ կադրում աշխատելու, ևս 33%-ը՝ նկարահանման և մոնտաժի հմտություններ, իսկ 22%-ը՝ խմբագրական հմտություններ են ձեռք բերել:
- Ըստ հարցման արդյունքների, պրակտիկայի շնորհիվ լրագրողների 67%-ը նաև ձեռք են բերել ամենօրյա լրագրողական աշխատանքի համար անհրաժեշտ մասնագիտական պատրաստվածություն, 56%-ը՝ սպորտային լրագրողին անհրաժեշտ մասնագիտական հմտություններ, 44%-ը՝ թղթակից լրագրողի աշխատանքի յուրահատկությունների փոխկապակցում, 33%-ը՝ խմբագրական աշխատանքի և այլ հմտություններ:
- Հարցմանը մասնակցած 9 պրակտիկանտից 5-ի (56%) ակնկալիքները կապված այս պրակտիկայի հետ արդարացվել են, 3-ի մոտ մասամբ են արդարացվել, իսկ մեկի մոտ՝ չեն արդարացվել (վերջինս չի նշել, թե որտեղ է անցկացրել իր պրակտիկան):

Պրակտիկայի արդյունավետության բարձրացման համար հարցված լրագրողների գրեթե կեսը մատնանշել է պրակտիկայի տևողությունը երկարացնելու, իսկ մեկ պրակտիկանտ՝ նաև ավելի խորացված կերպով գործընթացը կազմակերպելու անհրաժեշտության մասին:

2. «ԿԻՆԵԶԻՈԼՈԳԻԱ» ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

«Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա» կրթական ծրագրով նախատեսված մասնագիտական պրակտիկա է անցել 34 ուսանող, որոնցից 28-ը լրացրել է գնահատման հարցաթերթերը:

1.1 Պրակտիկայի անցկացման վայրերը

Գծապատկեր 17.



Ինչպես երևում է գծապատկերից, ապագա կինեզիոլոգները պրակտիկա են անցել հիմնականում (61%-ը) Հայկական կարմիր խաչի ընկերության և Հանրապետական մանկական վերականգնողական կենտրոններում: Մոտ 29%-ն էլ՝ «Ուիգմոր Քլինիք» բժշկական կենտրոնում: Հարկ է նկատել, որ պատասխանների հանրագումարը անցնում է 100%-ից, քանզի հարցվածների կեսը նշել են մեկից ավելի պրակտիկայի անցկացման վայրեր: Երկու ուսանող չի նշել ոչ մի պրակտիկայի վայրի անվանում:

3. Պրակտիկայի սկզբում Ձեզ տրամադրվե՞լ է պրակտիկայի ծրագիրը և տեղեկատվություն պրակտիկայի անցկացման գործընթացի վերաբերյալ:

Գծապատկեր 18.



4. Պրակտիկան կազմակերպված էր պրակտիկայի ծրագրին համապատասխան:

Գծապատկեր 19.



5. Պրակտիկայի նպատակը հասկանալի և մատչելի՞ էր Ձեզ համար:

Գծապատկեր 20.



6. Տեսական և գործնական առաջադրանքները պա՞րզ էին և հասկանալի:

Գծապատկեր 21.



7. Պրակտիկան արդյունավե՞տ էր գիտելիքի և գործնական կարողությունների մակարդակի բարձրացման համար:

Գծապատկեր 22.



8. Պրակտիկայի ընթացքում ձեռք բերած կարողությունները և փորձը կարո՞ղ եք կիրառել Ձեր աշխատանքային գործունեության ընթացքում:

Գծապատկեր 23.



9. Ուսումնառության ընթացքում Ձեր յուրացրած տեսական գիտելիքները և գործնական կարողությունները բավարա՞ր էին պրակտիկ գործունեություն իրականացնելու համար:

Գծապատկեր 24.



10. Ձեզ բավարարե՞ց ընդունող կազմակերպության աջակցությունը պրակտիկայի ընթացքում:

Գծապատկեր 25.



11. Ինչպե՞ս կգնահատեք պրակտիկայի բազայում տեղի մասնագետի աշխատանքը:

Գծապատկեր 26.



12. Ի՞նչ դիտարկումներ և առաջարկություններ ունեք պրակտիկայի բազայում տեղի մասնագետի աշխատանքի վերաբերյալ:

- ✓ Առաջարկում եմ ուսանողների հետ լինի անհատական աշխատանք, կամ գոնե 2 ուսանողին 1 թերապիստ լինի:
- ✓ Ավելացնել պրակտիկայի վայրերը և ժամաքանակը:
- ✓ Մասնագետները գերազանց էին աշխատում թե հոգեպես, և թե ֆիզիկապես՝ ընդունելով մարդուն:
- ✓ Տեղում տրամադրվեն գործնական նյութեր:
- ✓ Լավ մասնագետներ էին /3 կարծիք/

21 պրակտիկանտ կարծիք չի հայտնել այս հարցի առնչությամբ:

13. Ինչպե՞ս կգնահատեք պրակտիկան ղեկավարող մեթոդիստի (դասախոսի) աշխատանքը:

Գծապատկեր 27.



14. Ինչպե՞ս կգնահատեք պրակտիկայի փետրի օգտակարությունն ու արդյունավետությունը:

Գծապատկեր 28.



15. Պրակտիկայի փևողությունը բավարա՞ր էր դրված նպատակներին հասնելու համար:

Գծապատկեր 29.



16.1 Նշեք պրակտիկայի փեփրի 3 դրական կողմերը:

- ✓ Մասնագետիտական փորձի ձեռքբերման օժանդակում,
- ✓ ուսումնասիրել հիվանդների տվյալներ
- ✓ սովորում ենք գործնական շատ թեմաներ
- ✓ չկա դրական կողմ /2 կարծիք/

23 պրակտիկանտ կարծիք չի հայտնել այս հարցի առնչությամբ:

16.2. Նշեք պրակտիկայի փեփրի 3 բացասական կողմերը:

- ✓ ժամանակը քիչ է դրանով աշխատելու համար /3 կարծիք/
- ✓ ժամանակի կորուստ
- ✓ ժամանակը չի բավարարում

23 պրակտիկանտ կարծիք չի հայտնել այս հարցի առնչությամբ:

17. Կլինիկական պրակտիկայի ընթացքում ո՞ր կարողությունները և հմտություններն է Ձեզ հաջողվել ձեռք բերել, որոնք ուսումնառության ընթացքում պակասում էին:

Աղյուսակ 6.

Կարծիքներ	%
Թիմում աշխատելու, աշխատանքի կազակերպման և արդյունքների համար պատասխանատվություն ստանձնելու կարողություն:	46%
Վերականգնողական կենտրոնում կիրառվող ռեաբիլիտացիայի մեթոդների իմացություն և կիրառվող բուժական վարժությունների տեսակների իմացություն:	32%
Ռեաբիլիտացիայի ընթացքում ինքնուրույն կարողանալ կազմել յուրաքանչյուր հիվանդի ֆիզիկական ռեաբիլիտացիայի ծրագիրը և իրականացնել այն:	32%
Մասնագիտական գործողութունը պլանավորելու, կազակերպելու, իրականացնելու և ստացված արդյունքները վերլուծելու կարողություն:	32%
Ճիշտ գնահատել հիվանդի ֆիզիկական ակտիվոթյան դերը առողջութան հետ կապված խնդիրների և վնասվածքների գործում:	25%
Բոլոր նշված տարբերակները:	14%
Հիվանդությունների էթիոլոգիայի, պաթոգենեզի, կլինիկական արտահայտութ-յունների և բուժման ձևերի պատկերացումներ:	11%
Հիմնականում թիմում աշխատելը:	4%

9 պրակտիկանտ կարծիք չի հայտնել այս հարցի առնչությամբ: Հարկ է նաև նկատել, որ պատասխանների հանրագումարը անցնում է 100%-ից, քանզի հարցվածների գրեթե կեսը նշել է մեկից ավելի տարբերակներ:

18. Ի՞նչ ակնկալիքներ ունեիք Ձեր պրակտիկայից:

- ✓ Բավարար գիտելիքներ ստանալ:
- ✓ Գիտելիքի և փորձի ավելացում, աշխատանք հիվանդի հետ:
- ✓ Լավ մասնագետ դառնալ:
- ✓ Վերապատրաստվել՝ որպես կինեզիոլոգ:
- ✓ Ստանալ առավելագույն գործնական գիտելիքներ, որոնք կկիրառվեն աշխատանքում:

23 պրակտիկանտ կարծիք չի հայտնել այս հարցի առնչությամբ:

19. Ձեր ակնկալիքները արդարացվեցի՞ն:

Գծապատկեր 30.



Ստորև աղյուսակում ներկայացված են վերը նշված պրակտիկայից ուսանողների ակնկալիքները և այն հարցի պատասխանը, թե արդյո՞ք իրականացել են այդ ակնկալիքները:

Աղյուսակ 7.

18. Ի՞նչ ակնկալիքներ ունեիք Ձեր պրակտիկայից	*19. Ձեր ակնկալիքները արդարացվեցի՞ն*
Բավարար գիտելիքներ ստանալ:	հիմնականում ոչ
Գիտելիքի և փորձի ավելացում, աշխատանք հիվանդի հետ:	հիմնականում այո
Լավ մասնագետ դառնալ:	հիմնականում այո
Ստանալ առավելագույն գործնական գիտելիքներ, որոնք կկիրառվեն աշխատանքում:	հիմնականում այո
Վերապատրաստվել՝ որպես կինեզիոլոգ:	հիմնականում այո

20.1. Նշեք կլինիկական պրակտիկայի առավելությունները:

- ✓ տեսականը գործնականում կիրառելու հնարավորություն,
- ✓ փորձի և գիտելիքի ավելացում, աշխատանք հիվանդի հետ, մեթոդներ սովորել և կիրառել:

26 պրակտիկանտ կարծիք չի հայտնել այս հարցի առնչությամբ:

20.2. Նշեք կլինիկական պրակտիկայի թերությունները:

- ✓ ժամկետների սղությունը /5 կարծիք/
- ✓ հիմնականում նույնատիպ ախտորոշմամբ հիվանդներ են
- ✓ բազաների կրկնություն
- ✓ հիմնականում չեմ նկատել

21 պրակտիկանտ կարծիք չի հայտնել այս հարցի առնչությամբ:

21. Խնդրում ենք արտահայտեք պրակտիկայի արդյունավետության բարելավման առաջարկություններ:

- ✓ Ժամկետները երկարացնել: / 5 կարծիք/
- ✓ Ավելի շատ աշխատանք լինի հիվանդների հետ: / 2 կարծիք/
- ✓ Ինստիտուտում ճիշտ ուսուցանվող դասեր լինեն:
- ✓ Ավելի շատ պրակտիկ հմտություններ ձեռք բերել:

20 պրակտիկանտ կարծիք չի հայտնել այս հարցի առնչությամբ:

ԱՄՓՈՓՈՒՄ

«Կինեզիոլոգիա» կրթական ծրագրով նախատեսված մասնագիտական պրակտիկա է անցել 34 ուսանող (կինեզիոլոգներ), որոնցից 28-ը լրացրել են գնահատման հարցաթերթեր: Կինեզիոլոգները պրակտիկան հիմնականում անցել են Հայկական կարմիր խաչի ընկերության վերականգնողական կենտրոնում (61%) և Հանրապետական մանկական վերականգնողական կենտրոնում (61%[1]), 29%-ը՝ «Ուիգմոր Քլինիք» բժշկական կենտրոնում, 7%-ը՝ «ԱրԲեՍ» առողջության կենտրոնում, իսկ մյուս 7%-ը չի նշել վայրը:

Ըստ հարցման արդյունքների՝

- ✓ Պրակտիկանտների 57%-ին պրակտիկայի սկզբում տրամադրվել է պրակտիկայի ծրագիրը և տեղեկատվություններ պրակտիկայի անցկացման գործընթացի վերաբերյալ, 18%-ին մասամբ է տրամադրվել, իսկ 25%-ին չի տրամադրվել:
- ✓ Հարցվածների 68%-ի կարծիքով, պրակտիկան կազմակերպված էր պրակտիկայի ծրագրին համապատասխան:
- ✓ Պրակտիկայի նպատակը հասկանալի և մատչելի էր բոլոր հարցվածների համար:
- ✓ Տեսական և գործնական առաջադրանքները նույնպես պարզ էին և հասկանալի բոլորի համար:
- ✓ Բոլոր հարցված կինեզիոլոգ պրակտիկանտները (28 հոգի կամ 100%-ը) համարում են, որ պրակտիկան արդյունավետ էր գիտելիքի և գործնական կարողությունների մակարդակի բարձրացման համար:

[1] Հարցվածների կեսը նշել են մեկից ավելի պրակտիկայի անցկացման վայրեր, այդ իսկ պատճառով պատասխանների հանրագումարը անցնում է 100%-ից:

✓ Հարցված լրագրողների 96%-ը համաձայն է այն մտքի հետ, որ պրակտիկայի ընթացքում ձեռք բերած կարողությունները և փորձը կարող են կիրառել իրենց աշխատանքային գործունեության ընթացքում:

✓ Ինչ վերաբերում է այն հարցին, թե արդյո՞ք ուսումնառության ընթացքում իրենց յուրացրած տեսական գիտելիքներն ու գործնական կարողությունները բավարար էին պրակտիկ գործունեություն իրականացնելու համար, 18%-ը է պատասխանել է «այո», 61%-ը՝ «հիմնականում այո», իսկ 21%-ը՝ «հիմնականում ոչ»:

✓ Ընդունող կազմակերպության աջակցությունը պրակտիկայի ընթացքում բավարարել է բոլոր հարցվածներին:

✓ Պրակտիկայի բազայում տեղի մասնագետի աշխատանքը «գերազանց» են գնահատել հարցվածների 46%-ը, «լավ»՝ ևս 46%-ը, «բավարար»՝ 7%-ը:

✓ Պրակտիկան ղեկավարող մեթոդիստի (դասախոսի) աշխատանքը «գերազանց» են գնահատել հարցվածների 54%-ը, «լավ»՝ 39%-ը և «բավարար»՝ 7%-ը:

✓ Պրակտիկայի տետրի օգտակարությունն ու արդունավետութունը «գերազանց» են գնահատել հարցվածների 11%-ը, «լավ»՝ 18%-ը,«բավարար»՝ 39%-ը, «չեզոք»՝ 11%-ը, «վատ»՝ 11%-ը, և չեն գնահատել այն մեկ այլ 11%-ը:

✓ Ինչ վերաբերում է պրակտիկայի տևողությանը, հարցվածների միայն 32%-ն է համարում, որ այն բավարար էր դրված նպատակներին հասնելու համար: Պրակտիկանտների մեծ մասը ցանկություն են հայտնել ավելի երկարատև պրակտիկա անցնելու համար:

✓ Հարցված կինեզիոլոգ պրակտիկանտների 46%-ը կարողացել են պրակտիկայի շնորհիվ ձեռք բերել թիմում աշխատելու, աշխատանքի կազակերպման և արդյունքների համար պատասխանատվություն ստանձնելու կարողություններ, 32%-ը՝ վերականգնողական կենտրոնում կիրառվող ռեաբիլիտացիայի մեթոդների և կիրառվող բուժական վարժությունների տեսակների վերաբերյալ նոր գիտելիքներ են յուրացրել, ինչպես նաև յուրաքանչյուր հիվանդի ֆիզիկական ռեաբիլիտացիայի ծրագիրը ինքնուրույն կազմելու և իրականացնելու, մասնագիտական գործողութունը պլանավորելու, կազակերպելու, իրականացնելու և ստացված արդյունքները վերլուծելու հմտություններ ու կարողություններ են զարգարցրել:

✓ Պրակտիկանտների 71%-ի ակնկալիքները կապված այս պրակտիկայի հետ արդարացվել են, 11%-ի մոտ՝ ոչ (18%-ը չեն պատասխանել հարցին):

Պրակտիկայի արդյունավետության բարձրացման համար հարցված կինեզիոլոգները մատնանշել են պրակտիկայի տևողությունը երկարացնելու, հիվանդների հետ ավելի շատ աշխատելու, ԲՈՒՀ-ում համապատասխան ուսուցում ստանալու և պրակտիկ հմտություններ ձեռք բերելու անհրաժեշտության մասին:

3. «ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԱՐԶՈՒՄՆԵՐ» ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

«Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ» կրթական ծրագրով նախատեսված մասնագիտական պրակտիկա է անցել 236 ուսանող, որոնցից 134-ը (56.8%) լրացրել է գնահատման հարցաթերթերը: Աղյուսակում ներկայացված են հարցվողների մարզաձևերը և պրակտիկայի անցկացման վայրերը:

1. ***Հարցվողների մարզաձևերը***

Աղյուսակ 8.

Պրակտիկայի անցկացման վայրերը	*Հարցվողների մարզաձևերը*	Թիվը	%
Հայաստանի Ձյուդոյի Միության Կարատե-դո Ազգային ֆեդերացիա	կարատե-դո	24	17.9%
«Միկա» ՖԱ «Ուրարտու» ՖԱ «Փյունիկ» ՖԱ	ֆուտբոլ	24	17.9%
ՀՖԿՍՊԻ (ՖԻՄԱ)	ազատ ոճի ըմբշամարտ	13	9.7%
ՀՀ ԱԻՆ ՀՆՖ ԱԻԿ	փրկարար	12	9.0%
Երևանի բռնցքամարտի օլիմպիական հերթափոխի մասնագիտացված դպրոց	բռնցքամարտ	9	6.7%
Սամբո և ձյուդո օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց	սամբո	7	5.2%
ՀՖԿՍՊԻ	շախմատ	6	4.5%
«Երևանի Արմեն Տիգրանյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ	սպորտային պարեր	6	4.5%
Ծանրամարտի մանկապատանեկան մարզադպրոց	ծանրամարտ	6	4.5%
«Զեյթուն» ՄԱ	ձյուդո	5	3.7%
«Նորայր Մուշեղյանի անվան ըմբշամարտի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ	հունա-հռոմեական ըմբշամարտ	5	3.7%
Երևանի Աթլետիկայի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց	աթլետիկա	3	2.2%
Դ. Համբարձումյանի անվան ջրացատկի ՕՀՄՄ մարզադպրոց ՓԲԸ	լող	3	2.2%
«Երևանի Արաբկիրի խաղային մարզաձևերի ՄՊՄԴ» ՀՈԱԿ	վոլեյբոլ	3	2.2%
Հ. Շահինյանի անվան մարմնամարզության օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց ՊՈԱԿ	գեղ. մարմնամարզություն	2	1.5%
	մարմնամարզություն	2	1.5%
«Երևանի Շենգավիթի համալիր մարզաձևերի ՄՊՄԴ» ՀՈԱԿ	բասկետբոլ	2	1.5%
«ՀՀ հաշմանդամային սպորտի ֆեդերացիա» ՀԿ	ադապտիվ ֆիզիկական կուլտուրա	1	0.7%
ՀՖԿՍՊԻ (ՖԻՄԱ)	սեղանի թենիս	1	0.7%

2.Պրակտիկայի սկզբում Ձեզ տրամադրվե՞լ է պրակտիկայի ծրագիրը և տեղեկատվություն պրակտիկայի անցկացման գործընթացի վերաբերյալ:

Գծապատկեր 31.



3.Պրակտիկան կազմակերպված էր պրակտիկայի ծրագրին համապատասխան:

Գծապատկեր 32.



4. Պրակտիկայի նպատակը հասկանալի և մատչելի՞ էր Ձեզ համար:

Գծապատկեր 33.



5. Տեսական և գործնական առաջադրանքները պա՞րզ էին և հասկանալի:

Գծապատկեր 34.



6. Պրակտիկան արդյունավե՞տ էր գիտելիքի և գործնական կարողությունների մակարդակի բարձրացման համար:

Գծապատկեր 35.



7.Պրակտիկայի ընթացքում ձեռք բերած կարողությունները և փորձը կարո՞ղ եք կիրառել Ձեր աշխատանքային գործունեության ընթացքում:

Գծապատկեր 36.



8. Ուսումնառության ընթացքում Ձեր յուրացրած տեսական գիտելիքները ու գործնական կարողությունները բավարա՞ր էին պրակտիկ գործունեություն իրականացնելու համար:

Գծապատկեր 37.



9.Ձեզ բավարարեց ընդունող կազմակերպության աջակցությունը պրակտիկայի ընթացքում:

Գծապատկեր 38.



10. Ընդունող կազմակերպությունը ինչպե՞ս է աջակցել պրակտիկայի ընթացքում:

- Մարզագույք/ հանդերձանք/ խաղադաշտ, մարզադահլիճ (8 կարծիք)
- Չի տրվել ոչ մի աջակցություն (5 կարծիք)
- Լավ/մեծ աջակցություն (5 կարծիք)
- Ինչի կարիք որ կար՝ տրամադրվել է (4 կարծիք)
- Բացականերս համարել են հարգելի (3 կարծիք)
- Աջակցության կարիք չեմ ունեցել
- Աջակցություն խորհրդի տեսքով (2 կարծիք)
- Օգնել են ավելի արդյունավետ անցկացնել պրակտիկան (2 կարծիք)
- Տրամադրել են պրակտիկայի վերաբերյալ տեսական նյութեր և գրականություն (2 կարծիք)
- Աջակցել են աշխատանքի հետ կապված
- Աջակցել են թե՛ տեսական և թե՛ գործնական աշխատանքներում դասը ճիշտ կազմակերպելիս
- Ըմբռնումով են մոտեցել իմ անփորձությանը
- Ինքնուրույն դասերի անցկացման ժամեր են տրամադրվել

- Ծանոթացրել են դասերի ընթացքին, ապա հստակ մոտեցում է ցուցաբերվել և ինքնուրույն անցկացրել եմ դասը
- Կորոնավիրուսի պատճառով նորմալ հաճախումներ չի եղել
- Մասնագետների հետ աշխատանք ենք տանում, մասնագետները մեծ սիրով օգնում են մեզ:
- Մարզիչի կողմից մշտական ուշադրություն
- Շատ տարբեր առաջարկներ
- Ուսանողներին հստակ ցուցադրում էին պրակտիկ աշխատանքի ձևերը
- Պարապմուքներ, որոնց ժամանակ մարզիչները օգնել են հասկանալ մի շարք նրբություններ մարզումներ իրականացնելու ընթացքում

94 պրակտիկանտ (70%-ը) կարծիք չի հայտնել այս հարցի առնչությամբ:

11.Ինչպե՞ս կգնահատեք պրակտիկայի բազայում տեղի մասնագետի աշխատանքը:

Գծապատկեր 39.



12. Ի՞նչ դիտարկումներ և առաջարկություններ ունեք պրակտիկայի բազայում տեղի մասնագետի աշխատանքի բարելավման վերաբերյալ:

Հարկ է նշել, որ 112 պրակտիկանտ (84%-ը) կարծիք չի հայտնել այս հարցի առնչությամբ, իսկ որոշ պատասխաններ այնքան էլ չեն առնչվում այս հարցին, սակայն նշել ենք ստորև, քանզի վերջիններս կապված են ընդհանրապես պրակտիկայի հետ:

- Ամեն ինչ շատ լավ անցավ: (14 կարծիք)
- Մասնագետի աշխատանքը գերազանց էր: (2 կարծիք)
- Մասնագետը ամեն ինչ կատարել է ճիշտ:
- Մասնագետը հիմնականում լավ էր կատարում իր պարտականությունները կապված դպրոցում հնարավորությունների հետ:
- Կատարել վարժությունների կրկնօրինակ:
- Կցանկանայի, որ պրակտիկան անցկացվեր ավելի երկար, որպեսզի ավելի բարձր մակարդակի հասնենք:
- Հաճախակի կազմակերպել պրակտիկան:
- Կցանկանայի, որ տեղի մասնագետները ավելի շատ վստահեին պրակտիկանտներին:

13. Ինչպե՞ս կգնահատեք պրակտիկան ղեկավարող մեթոդիստի (դասախոսի) աշխատանքը:

Գծապատկեր 40.



14.Ինչպե՞ս կգնահատեք պրակտիկայի փեդրի օգտակարությունը:

Գծապատկեր 41.



15.Պրակտիկայի փևողությունը բավարա՞ր էր դրված նպատակներին հասնելու համար:

Գծապատկեր 42.



15.1. Ձեր կարծիքով որքա՞ն պետք է լինի պրակտիկայի փևողությունը՝ այն ավելի արդյունավետ դարձնելու համար:

75 պրակտիկանտ (56%-ը) կարծիք չի հայտնել այս հարցի առնչությամբ: 59 պատասխանողների կարծիքները, ըստ պատասխանողների թվերի, նշված են ստորև:

Աղյուսակ 9.

Կարծիքներ	Թիվը
1 կիսամյակ մասնագիտական, 8 շաբաթ մանկավարժական	1
10 շաբաթից ոչ պակաս մասնագիտական, 8 շաբաթ՝ ամենաքիչը մանկավարժական	1
2 ամիս մասնագիտական, ամիս ու կես մանկավարժական	1
2 շաբաթ մասնագիտական, 4 շաբաթ մանկավարժակա	2
4 շաբաթ մասնագիտական և 8 շաբաթ մանկավարժական	2
4 շաբաթ մասնագիտական և 8 շաբաթ մանկավարժական	1
4 շաբաթ մասնագիտական, 4 շաբաթ մանկավարժական	3
4 շաբաթ մասնագիտական, 6 շաբաթ մանկավարժական	1
6 շաբաթ մասնագիտական, 2 շաբաթ մանկավարժական	1
6 շաբաթ մասնագիտական, 4 շաբաթ մանկավարժական	**8**
6 շաբաթ մասնագիտական, 6 շաբաթ մանկավարժական	1
6 շաբաթ մասնագիտական, 8 շաբաթ մանկավարժական	1
8 շաբաթ մասնագիտական և 8 շաբաթ մանկավարժական	1
8 շաբաթ մասնագիտական, 4 շաբաթ մանկավարժական	1
8 շաբաթ մասնագիտական, 6 շաբաթ մանկավարժական	2
8 շաբաթ մասնագիտական, 8 շաբաթ մանկավարժական	**28**
8 շաբաթ մասնագիտական, այլ՝ 1 կիսամյակ մանկավարժական	1
10 շաբաթ մասնագիտական, 10 շաբաթ մանկավարժական	1
ավելի շատ մասնագիտական, ավելի շատ մանկավարժական	1
ինչքան շատ այնքան արդյունավետ մասնագիտական, 8 շաբաթ մանկավարժական	1

15.2.Ո՞ր կուրսից կցանկանայիք, որ բուհում իրականացվի պրակտիկան: Գծապատկեր 43.



16.Նշեք պրակտիկայի փեփրի դրական կողմերը:

Ընդամենը 23 պրակտիկանտ է (17%-ը) կարծիք հայտնել այս հարցի առնչությամբ: Որոշ պատասխաններ այնքան էլ չեն առնչվում այս հարցին, սակայն նշել ենք ստորև, քանզի վերջիններս ընդհանուր առմամբ պրակտիկայի մասին են:

- Հասկանալի էր, պարզ էր: (5 կարծիք)
- Օգնում է ավելի ճիշտ կազմակերպել/անցկացնել դասերը: (3 կարծիք)
- Հետաքրքիր էր: (3 կարծիք)
- Կոնսպեկտների առկայությունը (2 կարծիք)
- Արտացոլում է պրակտիկայի նպատակները:
- Դրական կողմ չուներ:
- Ինֆորմացիայով շատ հագեցած էր:
- Լավ մասնագետի հետ աշխատելը և մասնագիտական նոր գիտելիքներ ստանալը:
- Երեխաների հոգեբանություն բաժինը:
- Հարցաշար, կանոններ, թեստեր:
- Հեշտ էր, արդյունավետ էր:
- Նորություններով լի էր:
- Հստակ գիտելիք օրվա անելիքների մասին:
- Մատչելի էր ներկայացրած տետրի վարման կարգը:
